

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 11/1

22 մարտի 2016 թ.

Քննարկվեց քաղաքացի Սոս Մանուչարյանի 02.03.2016թ-ի գանգատը ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 27.08.2015թ-ի թիվ 160 որոշման դեմ:

Քաղաքացի Սոս Մանուչարյանի գանգատում բերված փաստարկները.

Սույն թվականի փետրվարի 29-ին բանկում գործարք կատարելիս Սոս Մանուչարյանը տեղեկացել է, որ իր անձնական բանկային հաշիվը կալանքի տակ է: Հետաքրքրվել և պարզել է, որ կալանքը դրվել է հարկադիր կատարման ծառայության կողմից, ինչ-որ սոցիալական վճարների պարտքի համար մոտ 400000 դրամի չափով:

Նշված պարտքը չէր կարող լինել, քանի որ Սոս Մանուչարյանը 2005թ-ին հաշվառված է եղել որպես անհատ ձեռնարկատեր և կատարել է մի քանի գործարք, որոնց վերաբերյալ հարկերը սահմանված կարգով վճարել է: 2005թ-ի վերջում դադարեցրել է գործունեությունը: 2008 կամ 2009թ-ին Սոս Մանուչարյանը այցելել է Մաշտոցի հարկային տեսչություն, որտեղ տեղեկացել է, որ պարտավորություններ չունի, ինչպես նաև, որ լուծարվել է:

ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայությունում Սոս Մանուչարյանը տեղեկացել է, որ այդ պարտքը վարչական որոշման հիման վրա է կայացվել, որը նա չի ստացել, և որի մասին իրեն չի տեղեկացվել:

Սոս Մանուչարյանը հայտնում է, որ մի քանի տարի է ինչ բնակվում է ք.Երևան, Առաքելյան 682., բն. 25 հասցեում, իսկ նախկինում բնակվել է Էստոնական 12/12., բն 119 հասցեում:

Ելնելով վերոգրյալից՝ Սոս Մանուչարյանը խնդրում է պարզել նշված թյուրիմացությունը, որպեսզի չեղյալ ճանաչվի այդ վարչական որոշումը և անձնական բանկային հաշվի վրայից հանվի կալանքը:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ բանկում գործարք կատարելիս Սոս Մանուչարյանը տեղեկացել է, որ իր բանկային հաշվի վրա կալանք է դրված: Կալանքը դրվել է ԴԱՀԿ ծառայության կողմից, հիմք ընդունելով պարտավորությունների գանձման վերաբերյալ ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի որոշումը: Մասնավորապես, ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետը, քննարկելով Ա/Ձ Սոս Մանուչարյանի վերաբերյալ վարչական վարույթի նյութերը պարզել է, որ 27.08.2015թ-ի դրությամբ նրա չկատարված հարկային պարտավորությունները կազմում են ընդամենը 371.248 դրամ, որն ամբողջությամբ պարտադիր սոցիալական ապահովության վճարի գծով է:

Արդյունքում, ղեկավարվելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1 հոդվածի և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55-րդ,

56-րդ, 58-րդ, 88-րդ հոդվածների դրույթներով ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի կողմից 27.08.2015թ-ին ընդունվել է թիվ 160 որոշումը (այսուհետ նաև Որոշում) Ա/2 Սոս Մանուչարյանից 371.248 դրամ պարտավորության գումար գանձելու մասին:

Քննարկման ընթացքում պարզվեց, որ Որոշումը կայացվելու համար հիմք է հանդիսացել «Հարկատու 3» տեղեկատվական բազայում Ա/2 Սոս Մանուչարյանի վերաբերյալ առկա տվյալները: Այսպես, «Հարկատու 3» տեղեկատվական բազայում առկա տվյալների համաձայն 27.08.2015թ-ի դրությամբ Ա/2 Սոս Մանուչարյանի սոցիալական ապահովության վճարների գծով չկատարված պարտավորությունները կազմել են ընդամենը 371.248 դրամ, այդ թվում՝ ապառք 240.000 դրամ, տույժ 131.248 դրամ:

Նիստի ընթացքում Սոս Մանուչարյանը պնդեց, որ 2005թ-ի վերջում դադարեցրել է գործունեությունը, ներկայացրել է դիմում՝ գործունեություն չիրականացնելու վերաբերյալ, ինչպես նաև հարկային մարմին է հանձնել անհատ ձեռնարկատիրոջ վկայականը:

Տվյալ դեպքում, ըստ «Հարկատու 3» տեղեկատվական բազայում առկա տվյալների, Ա/2 Սոս Մանուչարյանը մինչև 2009թ. ընկած ժամանակահատվածում որևէ պարտավորություն չի ունեցել: Ինչ վերաբերվում է գործունեությունը դադարեցնելու վերաբերյալ դիմում ներկայացվելուն, ինչպես նաև անհատ ձեռնարկատիրոջ վկայականը հարկային մարմին հանձնելու վերաբերյալ գանգատաբերի պնդումներին, ապա դրանց իսկությունը հնարավոր չէ պարզել, քանի որ Ա/2 Սոս Մանուչարյանի հարկային գործն արխիվացված է (փաստացի առկա չէ):

Քննարկվող դեպքում խախտվել են ՀՀ կառավարության 9 մարտի 2006 թվականի N 351-Ն որոշմամբ հաստատված «Պահպանության ժամկետների նշումով արխիվային փաստաթղթերի օրինակելի ցանկ»-ի 367-րդ կետի պահանջները, որի համաձայն հարկ վճարող և ապահովադիր իրավաբանական և ֆիզիկական անձանց հարկային (և ապահովադիրների) գործերը (հիմնադիր և պետական գրանցման փաստաթղթերի պատճեններ, հարկային հաշվառման վերցնելու փաստաթղթեր, հաշվեկշիռներ, եկամտահարկի հայտարարագրեր, հաշվետվություններ, հաշվարկներ, ստուգումների և ուսումնասիրությունների հանձնարարագրեր, հրամանների պատճեններ, ստուգման ակտեր, տեղեկանքներ, վարչական իրավախախտումների վերաբերյալ փաստաթղթեր, դատական ակտերի պատճեններ և այլն), մասնավորապես՝ հիմնադիր և հարկային ու սոցիալական վճարների գծով պարտավորությունները հաստատող փաստաթղթերը, ենթակա են արխիվացման միայն լուծարումից հետո:

Հանձնաժողովը գտնում է, որ Ա/2 Սոս Մանուչարյանի գործունեությունը պետք է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով դադարեցված (լուծարված) լիներ, հետևյալ պատճառաբանությամբ.

11.11.2005 թ-ին ընդունված «Անհատ ձեռնարկատերերի համար եկամտահարկի և պարտադիր, սոցիալական ապահովագրության վճարների արտոնություններ սահմանելու մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 1-ին հոդվածի համաձայն. «Սույն օրենքը տարածվում է միայն եկամտահարկի և (կամ) պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների նվազագույն գումարների վճարման հետ կապված պարտավորություններ ունեցող անհատ ձեռնարկատերերի վրա»:

Օրենքի 4-րդ հոդվածի համաձայն. «Սույն օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներում չնշված անհատ ձեռնարկատերերն ազատվում են 2003-2005

թվականների համար հաշվարկված և չվճարված եկամտահարկի և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների նվազագույն գումարների, ինչպես նաև դրանց նկատմամբ հաշվարկված և չվճարված տույժերի վճարումից (բացառությամբ սույն օրենքի 5-րդ հոդվածով սահմանված դեպքի):

Սույն հոդվածում նշված անհատ ձեռնարկատերերի կողմից 2006 թվականի հունվարի 1-ից հետո մինչև պետական գրանցամատյանում գործունեության դադարեցման (լուծարման) մասին գրառման պահը պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների նվազագույն գումարներ չեն հաշվարկվում (չեն վճարվում):

Սույն հոդվածում նշված անհատ ձեռնարկատերերի ցանկերը (2003-2005 թվականների համար հաշվարկված և չվճարված պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների նվազագույն գումարների պարտադիր նշումով) հարկային տեսչությունները մինչև 2006 թվականի սեպտեմբերի 1-ը ներկայացնում են պետական ռեգիստրի գործակալության համապատասխան տարածքային ստորաբաժանումներ՝ մինչև 2006 թվականի նոյեմբերի 1-ը պետական գրանցամատյանում գործունեության դադարեցման (լուծարման) մասին գրառում կատարելու, նրանց վկայականները անվավեր ճանաչելու և պարտավորությունները հրապարակելու համար»:

Տվյալ դեպքում Ա/Ձ Սոս Մանուչարյանը բավարարել է վերոգրյալ իրավանորմով նախատեսված դրույթների պահանջներին, հետևապես նրա վերաբերյալ տվյալները պետք է ընդգրկվեին հարկային տեսչության կողմից մինչև 2006 թվականի սեպտեմբերի 1-ը պետական ռեգիստրի գործակալության համապատասխան տարածքային ստորաբաժանումներ ներկայացվող ցանկերում՝ մինչև 2006 թվականի նոյեմբերի 1-ը պետական գրանցամատյանում գործունեության դադարեցման (լուծարման) մասին գրառում կատարելու, ինչպես նաև վկայականը անվավեր ճանաչելու և պարտավորությունները հրապարակելու համար: Սակայն, տվյալ դեպքում հարկային տեսչության կողմից «Անհատ ձեռնարկատերերի համար եկամտահարկի և պարտադիր, սոցիալական ապահովագրության վճարների արտոնություններ սահմանելու մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածով նախատեսված պահանջները չեն կատարվել, ինչի հետևանքով Ա/Ձ Սոս Մանուչարյանի նկատմամբ 2009-2012թ.թ. համար պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների նվազագույն գումարների գծով, ըստ էության, հաշվարկվել են ոչ իրավաչափ պարտավորություններ:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Չ Ո Ւ Մ Է՝

Չեղյալ համարել ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության կողմից 27.08.2015թ-ի թիվ 160 որոշումը:

Հանձնաժողովի նախագահ՝


Վ.ԱՌԴՈՒՄՅԱՆ